ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԳՀԱՊՁԲ-21-7/37-2

ք. Երևան «03» 08 2021թ.

ՀՀ Պաշտպանության նախարարությունը ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Գնորդ, մի կողմից, և Իմմունոֆարմ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Խ. Շաքարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Վաճառող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.1.9 Ապրանքների ընդունման գործընթացն իրականացնել ՀՀ պաշտպանության նախարարի 22.02.2019թ. N 177 հրամանի պահանջների համաձայն (հրամանը հրապարակված է http://mil.am կայքի «Գրադարանե բաժնի »ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԵ ենթաբաժնում):

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 5949906 /հինգ միլիոն ինն հարյուր քառասունինը հազար ինը հարյուր վեց/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-

ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է 15 բանկային օրվա ընթացքում, համապատասխան եռամսյակներում առկա միջոցների հաշվին, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ.:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 1-ին և 2-րդ չափաբաժինների ապրանքները հանդիսանում են հանդիսանում է հիմնական միջոց և երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներե բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ

ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի ,Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներե բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Իմմունոֆարմ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ք. Երևան, Հ.Ներսիսյան 10-3/1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 2500010857380100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 00650292
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ	
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Խ.ՇԱՔԱՐՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-21-7/37-2 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Գնման առարկայի		
չ/հ	անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Քրոմատոգրաֆիկ մեթոդների համար անալիտիկ ստանդարտների լրակազմ	**Հավաքածուն պարունակում է հետևյալը՝** **1)** 2.4 ԴԴՏ-ի անալիտիկ ստանդարտ, CAS Number 789-02-6 համապատասխան Մաքրությունը՝ ≥98.0%, քանակը՝ ոչ պակաս քան 100մգ.: **2)** 4.4 ԴԴՏ-ի անալիտիկ ստանդարտ, CAS Number 50-29-3 համապատասխան Մաքրությունը՝ ≥98.0%, քանակը՝ ոչ պակաս քան 50մգ.: **3)** 4.4 ԴԴՏ-Դ8-ի ներքին անալիտիկ ստանդարտ, CAS Number 93952-18-2 համապատասխան Մաքրությունը՝ ≥98.0%, քանակը՝ ոչ պակաս քան 10մգ.: **4)** 2.4 ԴԴԴ-ի անալիտիկ ստանդարտ, CAS Number 53-19-0, համապատասխան Մաքրությունը՝ ≥98.0%, քանակը՝ ոչ պակաս քան 1000մգ.: **5)** 4.4 ԴԴԴ-ի անալիտիկ ստանդարտ, CAS Number 72-54-8 համապատասխան Մաքրությունը՝ ≥98.0%, քանակը՝ ոչ պակաս քան 1000մգ.: **6)** 2.4 ԴԴԵ-ի անալիտիկ ստանդարտ, CAS Number 3424-82-6 համապատասխան Մաքրությունը՝ ≥98.0%, քանակը՝ ոչ պակաս քան 50մգ.: **7)** 4.4 ԴԴԵ-ի անալիտիկ ստանդարտ, CAS Number 72-55-9 համապատասխան Մաքրությունը՝ ≥98.0%, քանակը՝ ոչ պակաս քան 500մգ.: **8)** Ալֆա -ՀՔՑՀ անալիտիկ ստանդարտ, CAS Number 319-84-6 համապատասխան Մաքրությունը՝ ≥98.0%, քանակը՝ ոչ պակաս քան 250մգ.: **9)** Բետտա-ՀՔՑՀ Դ6 ներքին անալիտիկ ստանդարտ, CAS Number 86194-41-4 համապատասխան Մաքրությունը՝ ≥98.0%, քանակը՝ ոչ պակաս քան 25մգ.: **10)** Բետտա-ՀՔՑՀ անալիտիկ ստանդարտ, CAS Number 319-85-7 համապատասխան Մաքրությունը՝ ≥98.0%, քանակը՝ ոչ պակաս քան 25մգ.: **11)** Լինդանի ռեֆերեն սստանդարտ, CAS Number 58-89-9 համապատասխան Մաքրությունը՝ ≥99.0%, քանակը՝ ոչ պակաս քան 10մգ.: **12)** Էնդոսուլֆանիան ալիտիկ ստանդարտ, CAS Number 115-29-7 համապատասխան Մաքրությունը՝ ≥98.0%, քանակը՝ ոչ պակաս քան 500մգ.: **13)** Պերմետրինիան ալիտիկ ստանդարտ, CAS Number 52645-53-1 համապատասխան Մաքրությունը՝ ≥98.0%, քանակը՝ ոչ պակաս քան 500մգ.: **14)** Ցիֆլուտրինիան ալիտիկ ստանդարտ, CAS Number 68359-37-5 համապատասխան Մաքրությունը՝ ≥98.0%, քանակը՝ ոչ պակաս քան 500մգ.: **15)** λ ցիհալոտրինի անալիտիկ ստանդարտ, CAS Number 91465-08-6 համապատասխան Մաքրությունը՝ ≥98.0%, քանակը՝ ոչ պակաս քան 100մգ.: **16)** Ցիպերմետրինի անալիտիկ ստանդարտ, CAS Number 1315501-18-8 համապատասխան Մաքրությունը՝ ≥98.0%, քանակը՝ ոչ պակաս քան 10մգ.: **17)** Հեքսաքլորբենզոլի անալիտիկ ստանդարտ, CAS Number 118-74-1 համապատասխան Մաքրությունը՝ ≥99.0%, քանակը՝ ոչ պակաս քան 5000մգ.: **18)** Ալդրինիան ալիտիկ ստանդարտ, CAS Number 309-00-2 համապատասխան Մաքրությունը՝ ≥98.0%, քանակը՝ ոչ պակաս քան 1000մգ.: **19)** Դիելդրինիան ալիտիկ ստանդարտ, CAS Number 60-57-1 համապատասխան Մաքրությունը՝ ≥98.0%, քանակը՝ ոչ պակաս քան 25մգ.: **20)** Կումաֆոսի անալիտիկ ստանդարտ, CAS Number 56-72-4 համապատասխան Մաքրությունը՝ ≥98.0%, քանակը՝ ոչ պակաս քան 100մգ.: **21)** Ֆոզալոնի անալիտիկ ստանդարտ, CAS Number 2310-17-0 համապատասխան Մաքրությունը՝ ≥98.0%, քանակը՝ ոչ պակաս քան 1000մգ.: **22)** Խոլեստերոլ անալիտիկ ստանդարտ, CAS Number 80-99-9 համապատասխան Մաքրությունը՝ ≥99.0%, քանակը՝ ոչ պակաս քան 5000մգ.: **23)** Տետրահիդրոֆուրան անալիտիկ ստանդարտ, CAS Number 109-99-9 համապատասխան Մաքրությունը՝ ≥99.0%, քանակը՝ ոչ պակաս քան 10մլ.: **24)** Բենզապիրեն անալիտիկ ստանդարտ, CAS Number 63466-71-7 համապատասխան Մաքրությունը՝ ≥97.0%, քանակը՝ ոչ պակաս քան 5մգ.: **25)** Սնդիկի ստանդարտ, CAS Number 7439-97-6 համապատասխան Կոնցենտրացիան՝ 100ppml, քանակը՝ ոչ պակաս քան 100մլ.: **26)** Ֆիտոստերոլների խառնուրդ, խառնուրդի գումարային կոնցենտրացիան 25մգ/մլ Խառնուրդը իր մեջ ներառում է. բրասիկաստերոլ՝ CAS Number 474-67-9 համապատասխան, կամպեստերոլ՝ CAS Number 474-62-4 համապատասխան, ստիգմաստերոլ՝ CAS Number 83-48-7 համապատասխան և բետտա սիտոստերոլ՝ CAS Number 83-46-5 համապատասխան, խառնուրդնելը լինեն քլորոֆորմում, քանակը՝ ոչ պակաս քան 100մլ.: Անալիտիկ ստանդարտները և ֆիտոստերոլների խառնուրդը լինեն սրվակներով՝ պահանջվող քանակների համապատասխան:

		Մատակարարման ժամանակ մատակարարի կողմից պետք է ներկայացվի արտադրողի կողմից տրված որակը հավաստագիր: Ստանդարտերի փաթեթաորումը՝ գործարանային, մատակարարման պահին պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 1 տարի:
2	Քրոմատոգրաֆիկ մեթոդների համար ռեագենտների լրակազմ	**Հավաքածուն պարունակում է հետևյալը՝** **1)** Bio-beads սորբենտ, քանակը՝ ոչ պակաս քան 0.4 կգ Էքսկլյուզիոն լիմիտը 200-16000դալտոն Խաչաձև կապերը 5%-ից ոչ ավել Ծակոտկենությունը 300 անգստրեմ Սորբենտ գելային քրոմատոգրաֆիայի համար Արտադրողի կողմից տրված որակի սերտիֆիկատի առկայություն, պոլիքլորացված բիֆենիլների մաքրելու համար, մեթոդիկայի առկայություն: **2)** Ացետոնիտրիլ, CH3CN, քանակը՝ ոչ պակաս քան 2.5լ Cas 75-05-8 Ultra HPLC grade, Մաքրությունը՝ ≥99.9% Աբսորբցիան 210 nm ≤2 mAU 210 nm ≤8 mAU (drift): **3)** Դիեթիլեթեր, (CH3CH2)2O, քանակը՝ ոչ պակաս քան 2.5լ CAS Number 60-29-7 Մաքրությունը՝ ≥99.0%: **4)** Էթիլացետատ, CH3COOC2H5, քանակը՝ ոչ պակաս քան 2.5լ CAS Number 141-78-6 HPLC grade Մաքրությունը՝ ≥99.0% at 265 nm 70% at 280 nm 80%: **5)** Իզոպրոպանոլ, (CH3)2CHOH, քանակը՝ ոչ պակաս քան 2.5լ CAS Number 67-63-0 HPLC grade, Մաքրությունը՝ ≥98.0%: **6)** Պետրոլիումի եթեր, քանակը՝ ոչ պակաս քան 1լ CAS Number 101316-46-5 Մաքրությունը՝ ≥95.0%, 30-40 °C-ում: **7)** Տոլուոլ, C6H5CH3, քանակը՝ ոչ պակաս քան 2.5լ CAS Number 108-88-3 HPLC grade: **8)** Ֆլորիսիլ, MgO3Si, քանակը՝ ոչ պակաս քան 0.2 կգ CAS Number 1343-88-0 HPLC grade մասնիկների չափերը 0,15մմ, ծակոտկենությունը 60: **9)** Դիքլորմեթան, CH2Cl2, քանակը՝ ոչ պակաս քան 2.5լ Cas 75-09-2 HPLC grade, Մաքրությունը՝ ≥99.95% Ջրի պարունակությունը <0.003% Չցնող մաս <0.0003%: **10)** Նատրիումի սուլֆատ, Na2SO4, քանակը՝ ոչ պակաս քան 1կգ CAS Number 7757-82-6 Մաքրությունը՝ ≥98%: **11)** C 18 սորբենտ, քանակը՝ ոչ պակաս քան 1կգ Սորբենտ նմուշների մաքրման համար Մասնիկների չափը 25-45մկմ Ծակոտկենությունը 60: **12)** Իզոօկտան, (CH3)2CHCH2C(CH3)3, քանակը՝ ոչ պակաս քան 2.5լ CAS Number 540-84-1 Մաքրությունը՝ ≥99.80% Ջրի պարունակությունը <0.003% Չցնող մաս <0.0003%: **13)** Ցիկլոհեքսան, C6H12, քանակը՝ ոչ պակաս քան 2.5լ CAS Number 110-82-7 Մաքրությունը՝ ≥99.5%, HPLC grade Ջրի պարունակությունը <0.005% Չցնող մաս <0.0005%: **14)** Նատրիումի քլորիդ, NaCl, քանակը՝ ոչ պակաս քան 5կգ CAS Number 7647-14-5 Մաքրությունը՝ ≥99%: **15)** Ծծմբական թթու, H2SO4, քանակը՝ ոչ պակաս քան 2լ CAS Number 7664-93-9 Մաքրությունը՝ 95.0% -98.0% ԱԱՍ մեթոդով հետքային տարրերի հայտնաբերման համար: **16)** Բենզոլ, C6H6, քանակը՝ ոչ պակաս քան 5լ CAS Number 71-43-2 Մաքրությունը՝ ≥98.0%: **17)** Նատրիումի հիդրոկարբոնատ $NaHCO_3$, քանակը՝ ոչ պակաս քան 0,5լ CAS Number 144-55-8

		Մաքրությունը՝ ≥99.7.0%: **18)** Աղաթթու, HCl, քանակը՝ ոչ պակաս քան 2.5լ CAS Number 7647-01-0 Մաքրությունը՝ ≥37%: **19)** Նատրիումի օքսալատ $C_2Na_2O_4$, քանակը՝ ոչ պակաս քան 0.25կգ CAS Number 62-76-0 Մաքրությունը՝ ≥99.0%: **20)** Քլորոֆորմ CHCl3, քանակը՝ ոչ պակաս քան 5լ CAS Number 67-66-3 Մաքրությունը՝ ≥99.0%: **21)** Մեթիլենքլորիդ, CH2Cl2, քանակը՝ ոչ պակաս քան 5լ Cas 75-09-2 HPLC grade: **22)** Դիմեթիլֆորմամիդ (CH3)2NCH(OCH3)2, քանակը՝ ոչ պակաս քան 25 մլ CAS Number 4637-24-5 Մաքրությունը՝ ≥98.0%: Ռեագենտները նախատեսված են GC-MS-MS, LC-MS-MS մեթոդներով վերլուծության համար: Մատակարարման ժամանակ մատակարարի կողմից պետք է ներկայացվի արտադրողի կողմից տրված որակը հավաստագիր: Ստանդարտերի փաթեթաորումը՝ գործարանային, մատակարարման պահին պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 1տարի:
3	Դիամինոսորբենտ	Դիամինոսորբենտի մասնիկների չափերը՝ 45 մկմ, ծակոտկենությունը 60 անգստրեմ, PH ստաբիլությունը 2-8, Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ: Քանակը 100գր, փաթեթավորումը՝ գործարանային:
4	Դիեթիլեթեր	Cas Number 60-29-7 Մաքրությունը՝ ≥99.0%, Չցնդող մնացորդը՝ ոչ ավել 10 ppm, Ջրի պարունակությունը ոչ ավել քան 300 ppm, GC-MS-MS, LC-MS-MS մեթոդներով վերլուծության համար: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ: Փաթեթավորումը՝ 2.5 լ ապակյա տարա:
5	Էթիլացետատ	Cas Number 141-78-6 HPLC grade Մաքրությունը՝ ≥99.0%, at 265 nm 70%, at 280 nm 80%, GC-MS-MS, LC-MS-MS մեթոդներով վերլուծության համար կամ համարժեք: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ: Փաթեթավորումը՝ 2.5 լ ապակյա տարա:
6	Հեպտան	CH3(CH2)5CH3, Մոլյար զանգված՝ 100.2 գր/մոլ, Մաքրությունը՝ ≥ 99.0%, Ջրի պարունակությունը(KF) ≤0.01%, Չցնդող մնացորդը՝ ոչ ավել քան 0.0005%, GC-MS-MS, LC-MS-MS մեթոդներով վերլուծության համար: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ: Փաթեթավորումը՝ 2.5 լ ապակյա տարա:
7	Մեթանոլ	CH4O, Մոլյար զանգված՝ 32,04 գ/մոլ, Պարունակությունը նվազագույնը 99.9%, LCMS, UHPLC Gradient grade Ջրի պարունակությունը ոչ ավել քան՝ 0.01%, ՈՒՄ Կլանումը՝ 200նմ-ում < 0.022,195նմ < 0.097,190նմ-ում < 0.06: Չոր մնացորդը՝ < 0.0002 %, (drift)՝ < 12 mAU: GC-MS-MS, LC-MS-MS մեթոդներով վերլուծության համար: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ: Փաթեթավորումը՝ 2.5 լ ապակյա տարա:
8	Պետրոլիումի եթեր	Cas 101316-46-5, Թափանցիկ լուծույթ անալիզի համար, Եռման ջերմաստիճանը՝ նվազագույնը 40°C, առավելագույնը 60°C,

		Խտությունը՝0.647-0.654գ/մլ, Զցնդող մնացորդը < 10 ppm, Ջրի մնացորդը՝ < 100 ppm: GC-MS-MS, LC-MS-MS մեթոդներով վերլուծության համար: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ: Փաթեթավորումը՝ 1 լ ապակյա տարա:
9	Ֆլորիսիլ	Ֆլորիսիլի մասնիկների չափերը՝ 60-100 սորբենտ, GC-MS-MS, LC-MS-MS մեթոդներով վերլուծության համար: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ: Քանակը 100գր, փաթեթավորումը՝ գործարանային:
10	C 18 սորբենտ	Մասնիկների չափերը՝ 45 մկմ, Ծակոտկենությունը՝ 60 անգստրեմ, PH ստաբիլությունը՝ 2-8, GC-MS-MS, LC-MS-MS մեթոդներով վերլուծության համար: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ: Քանակը 100գր, փաթեթավորումը՝ գործարանային:
11	Իզոօկտան	CAS Number 540-84-1, Մաքրությունը՝ ≥99.80%, Ջրի պարունակությունը՝ <0.003%, Զցնդող մնացորդ՝ <0.0003%, GC-MS-MS, LC-MS-MS մեթոդներով վերլուծության համար: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ: Փաթեթավորումը՝ 2.5 լ ապակյա տարա:
12	Ցիկլոհեքսան	CAS Number 110-82-7, մՄաքրությունը՝ ≥99.5%, Ջրի պարունակությունը՝ <0.005%, Զցնդող մնացորդ՝ <0.0005% GC-MS-MS, LC-MS-MS մեթոդներով վերլուծության համար: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ: Փաթեթավորումը՝ 5 լ պլաստիկե տարա:
13	Նատրիումի մեթոքսիդ	CAS Number 124-41-4 Մաքրությունը՝ ≥98%, GC-MS-MS, LC-MS-MS մեթոդներով վերլուծության համար: Մատակարարման պահին պիտանելիության ժամկետը 70%-ից ոչ պակաս: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ: Քանակը 100գր, փաթեթավորումը՝ գործարանային:
14	Լաբորատոր ապակյա տարրա խցանով	ISO 4796 համապատասխան, Տարողությունը՝ 100 մլ ±0,15մլ, Խցանը՝ պլաստիկ և մանեկային հերմետիկ փակվող, Ջերմակայուն՝ մինչև 140°C, Պատրաստված ջերմա և քիմապես կայուն բորոսիլիկատային 3.3. տիպի ապակուց, A դասի ճշտությամբ: Ապրանքատեսակը լինի նոր և չօգտագործված: Փաթեթավորումը՝ օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, ստվարաթղթե տուփով: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ:
15	Լաբորատոր ապակյա տարրա խցանով	ISO 4796 համապատասխան, Տարողությունը՝ 250 մլ ±0,15մլ, Խցանը՝ պլաստիկ և մանեկային հերմետիկ փակվող, Ջերմակայուն՝ մինչև 140°C, Պատրաստված ջերմա և քիմապես կայուն բորոսիլիկատային 3.3. տիպի ապակուց, A դասի ճշտությամբ: Ապրանքատեսակը լինի նոր և չօգտագործված: Փաթեթավորումը՝ օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, ստվարաթղթե տուփով: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ:
16	Լաբորատոր ապակյա բաժակ	ISO 3819 համապատասխան, տարողությունը՝ 100մլ, ճշգրտությունը ±0,5մլ:

		պատրաստված ջերմա և քիմապես կայուն բորոսիլիկատային 3.3. տիպի ապակուց, A դասի ճշտությամբ, Բաժակը լինի չափիչ նիշերով Ապրանքատեսակը լինի նոր և չօգտագործված: Փաթեթավորումը՝ օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, ստվարաթղթե տուփով: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ:
17	Լաբորատոր ապակյա ձագար	ISO 4798 համապատասխան, d=7,5սմ, Պատրաստված ջերմա և քիմապես կայուն բորոսիլիկատային 3.3 տիպի ապակուց, Ապրանքատեսակը լինի նոր և չօգտագործված: Փաթեթավորումը՝ օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, ստվարաթղթե տուփով: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ:
18	Լաբորատոր ապակյա ձագար	ISO 4798 համապատասխան, d=5սմ, Պատրաստված ջերմա և քիմապես կայուն բորոսիլիկատային 3.3 տիպի ապակուց, Ապրանքատեսակը լինի նոր և չօգտագործված: Փաթեթավորումը՝ օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, ստվարաթղթե տուփով: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ:
19	Լաբորատոր ապակյա ձագար	ISO 4798 համապատասխան, d=3սմ, Պատրաստված ջերմա և քիմապես կայուն բորոսիլիկատային 3.3 տիպի ապակուց, Ապրանքատեսակը լինի նոր և չօգտագործված: Փաթեթավորումը՝ օդախցիկներով պոլիէթիլենային պաշտպանիչ փաթեթավորմամբ, ստվարաթղթե տուփով: Մատակարարման պահին մատակարարը ներկայացնի արտադրողի կողմից տրված որակը հավաստող փաստաթուղթ:

Ծանոթություն

1. Ապրանքների ձեռք բերման անհրաժեշտ պայման է դրանց չօգտագործված լինելը:
2. Մատակարարման վայրը՝ Երևան, Արշակունյաց 73ա հասցեյով:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	Հ/մ	Քանակը	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	Մատակարարումը 2021թ. ոչ ուշ քան 31.08.2021թ.
1	Քրոմատոգրաֆիկ մեթոդների համար անալիտիկ ստանդարտների լրակազմ	լրակազմ	1	3150000	3150000	1
2	Քրոմատոգրաֆիկ մեթոդների համար ռեագենտների լրակազմ	լրակազմ	1	1549200	1549200	1
3	Դիամինոսորբենտ	հատ	1	99960	99960	1
4	Դիեթիլեթեր	լիտր	2.5	6499.2	16248	2.5
5	Էթիլացետատ	լիտր	2.5	7699.2	19248	2.5
6	Հեպտան	կգ	10	9996	99960	10
7	Մեթանոլ	կգ	2.5	4200	10500	2.5
8	Պետրոլիումի եթեր	լիտր	5	6984	34920	5
9	Ֆլորիսիլ	հատ	1	24960	24960	1
10	C 18 սորբենտ	հատ	2	339960	679920	2
11	Իզոօկտան	կգ	2.5	17568	43920	2.5
12	Ցիկլոհեքսան	կգ	5	4392	21960	5
13	Նատրիումի մեթօքսիդ	կգ	0.1	139200	13920	0.1
14	Լաբորատոր ապակյա տարրա	հատ	12	3160	37920	12

	խցանով					
15	Լաբորատոր ապակյա տարրա խցանով	հատ	15	3450	51750	15
16	Լաբորատոր ապակյա բաժակ	հատ	20	1440	28800	20
17	Լաբորատոր ապակյա ձագար	հատ	10	1800	18000	10
18	Լաբորատոր ապակյա ձագար	հատ	8	1590	12720	8
19	Լաբորատոր ապակյա ձագար	հատ	8	4500	36000	8

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

Իմմունոֆարմ ՍՊԸ
տնօրեն

Խ.ՇԱՔԱՐՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-21-7/37-2 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2021թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 10.12.2021թ., ընդ որում՝		
			2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Քրոմատոգրաֆիկ մեթոդների համար անալիտիկ ստանդարտների լրակազմ	33691400/1	3150000	3150000	3150000
2	քիմիական ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ/Քրոմատոգրաֆիկ մեթոդների համար ռեագենտների լրակազմ	33691400/2	1549200	1549200	1549200
3	ազդանյութեր (ռեագենտներ) և կոնտրաստային նյութեր/Դիամինոսորբենտ	33691157/1	99960	99960	99960
4	էթիլ եթեր /էֆիր/Դիեթիլեթեր	33691871/1	16248	16248	16248
5	Էթիլացետատ/Էթիլացետատ	24321820/1	19248	19248	19248
6	Լուծիչներ/Հեպտան	44831500/1	99960	99960	99960
7	Լուծիչներ/Մեթանոլ	44831500/2	10500	10500	10500
8	Եթերներ/Պետրոլիումի եթեր	24321580/1	34920	34920	34920
9	ազդանյութեր (ռեագենտներ) և կոնտրաստային նյութեր/Ֆլորիսիլ	33691157/2	24960	24960	24960
10	ազդանյութեր (ռեագենտներ) և կոնտրաստային նյութեր/C 18 սորբենտ	33691157/3	679920	679920	679920
11	Լուծիչներ/Իզոօկտան	44831500/5	43920	43920	43920
12	Լուծիչներ/Ցիկլոհեքսան	44831500/6	21960	21960	21960
13	Լուծիչներ/Նատրիումի մեթօքսիդ	44831500/7	13920	13920	13920
14	լաբորատոր ապակյա արտադրանք/Լաբորատոր ապակյա տարրա խցանով	33791300/2	37920	37920	37920
15	լաբորատոր ապակյա արտադրանք/Լաբորատոր ապակյա տարրա խցանով	33791300/3	51750	51750	51750
16	լաբորատոր ապակյա արտադրանք/Լաբորատոր ապակյա բաժակ	33791300/8	28800	28800	28800
17	լաբորատոր ապակյա արտադրանք/Լաբորատոր ապակյա ձագար	33791300/10	18000	18000	18000
18	լաբորատոր ապակյա արտադրանք/Լաբորատոր ապակյա ձագար	33791300/11	12720	12720	12720
19	լաբորատոր ապակյա արտադրանք/Լաբորատոր ապակյա ձագար	33791300/12	36000	36000	36000

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

Իմմունոֆարմ ՍՊԸ
տնօրեն

Խ.ՇԱՔԱՐՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-21-7/37-2 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-21-7/37-2 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն